ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 9.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի նիստի
05 ապրիլի 2016թ.

Նախագահ՝ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար՝ Կ .Հ. Հովսեփյան

Նիստին մասնակցում էին խորհրդի 10 անդամներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. *Ամբիոնի վարիչների հաշվետվություն :*
   /զեկ. Ա.Վ. Ցուցուլյան, Ռ. Քամալյան /
2. *Ուսանողների բավարարվածության մակարդակը ուսումնառությունից և օժանդակ ծառայությունից:*
   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/
3. *Որակի ներքին ապահովման համակարգի կառույցների գործունեության արդյունավետության ապահովման և ֆակուլտետի զարգացման ռազմավարական ծրագրի քննարկում:*
   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցներն անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Զաքարյանը:

1. Օրակարգի առաջին հարցի առաջին մասը ներկայացրեց մաթեմատիկայի և ընդհանուր բնագիտության ամբիոնի վարիչ Ա.Վ. Ցուցուլյանը: Նա ամփոփեց երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների արդյունքները: Զեկուցողը նշեց, որ ամբիոնի կողմից իրականացվել է 20 ընթացիկ քննություն և ստուգում: Միջինից ցածր արդյունքներ գրանցվել են չորս առարկաներից՝ կոմպլեքս անալիզ, մաթեմատիկական անալիզ-2, ռադիոէլեկտրոնիկա և մաթ. ֆիզ. հավասարումներ առարկաներից:

Օրակարգի առաջին հարցի երկրորդ մասը ներկայացրեց ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ Ռ. Քամալյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Կ. Հ. Հովսեփյանը, Ք.Վ. Օթարյանը և ուրիշներ:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Ուշադրություն դարձնել այն առարկաներին, որոնցից ստացված արդյունքները ցածր են միջին գնահատականից:

2. Օրակարգի երկրորդ հարցը ներկայացրեց խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա նշեց, որ ուսանողները գոհ են ուսումնառության մակարդակից: Դա է վկայում ֆակուլտետում անցկացված սոցհարցման արդյունքները: Զեկուցողը անդրադարձավ սոցհարցման ժամանակ ուսանողների կողմից ներկայացված առաջարկներին: Նա բարձր գնահատեց ուսանողների կողմից հաճախակի կազմակերպվող զեկույցները և առաջարկեց, որ հաճախակի բնույթ կրեն նման զեկույցները, որոնք բարձրացնում են ուսանողների ներգրավվածությունը ուսումնական պրոցեսին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Վ. Ցուցուլյանը, Ք.Վ. Օթարյանը և ուրիշներ:

ՈՐՈՇԵՑԻՆ- 2. Ակտիվացնել ուսանողների ներգրավվածությունը գիտական զեկույցներում և ավելացնել ինքնուրույն աշխատանքի քանակը:

3. Օրակարգի երրորդ հարցը ներկայացրեց գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա նշեց, որ որակի ներքին ապահովման համակարգի կառույցները աշխատում են արդյունավետ, ինչի մասին են վկայում ուսումնառության արդյունքները: Այնուհետև զեկուցողը անդրադարձավ ֆակուլտետի ռազմավարական ծրագրին: Նա ներկայացրեց ֆակուլտետի զարգացման ռազմավարական ծրագրի հիմնարար արժեքները, նպատակները. իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխումներ՝ որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ, ընդլայնել ֆակուլտետի դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվումը հետազոտական աշխատանքներում, նպաստել հետազոտական աշխատանքների միջազգայնացմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Գ.Վ. Գուլակյանը, Ա.Վ. Ցուցուլյանը և ուրիշներ:

ՈՐՈՇԵՑԻՆ- 3. Գնահատել բավարար որակի ներքին ապահովման համակարգի կառույցների գործունեության արդյունավետությունը:

ՆԱԽԱԳԱՀ	**Մ.Ա. ԶԱՔԱՐՅԱՆ**
ՔԱՐՏՈՒՂԱՐ	**Կ. Հ. ՀՈՎՍԵՓՅԱՆ**